

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մեր գլխաւորը. Գործ-
նական գիտելիքներ. Նամակ վաղարշապա-
տից. Նամակ Նոր-Բայազետից. Ներքին լու-
սեր. ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երկու շաբաթ-
Առաջին լուսեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. ՏԵՂԵԿԱՅՈՑՑ-
ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. ԲԵ-
ժակաւ և առողջապահական ժողովրդական գոր-
ծիչներ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ԳՊՐՈՑՆԵՐԸ

Անդրկովկասում միլիոնից աւելի հայ ժողովուրդ
է ապրում, և այդ ահագին ազգաբնակչութեան
մէջ ծխական-եկեղեցական դպրոցները, որոնց
գլխաւոր նպատակներէն մէկն է դրաւի տու-
թիւն տարածել ժողովրդի մէջ, այնքան քիչ են,
որ երբեք չեն կարող աշխուժեցնել ծառայելի-
րանց գլխաւոր նպատակին:

Մեր եկեղեցական-ծխական դպրոցները թիւը
որ 83—84 թվականներին 400-ից աւելի էր,
այժմ այնքան նուազել է, որ հարկերից հաղւել
անցնում այդ թիւը:

Մի միլիոն ժողովուրդ և մօտ հարիւր
տարեկան դպրոցներ. այդ այնքան պերճաբոս և
հասկանալի փաստ է, որ պարզաբանելու իս-
կի կարիք չը կայ: Հարկւր տարեկան դպ-
րոցները բաւականութեամբ չեն կարող տալ
մի միլիոն ժողովրդի, այն էլ մի այնպիսի ժողո-
ւրդի, որը ուսման կարեւորութիւնը վաղուց ըմ-
բանել է, որը նոյն իսկ մի քանի տարի առաջ մի
քանի անգամ աւելի դպրոցներ էր պահում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲՈՇԿԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՎԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱ-
ԿԱՆ ԳՐԱՐՈՑՆԵՐ

«О холерѣ и мѣрахъ предохра-
ненія отъ зараблѣванія ею». Составилъ Н. И. Богословскій. Из-
даніе народной бібліотеки». Москва,
1885 г. Գրքի լի կազմի վրա կար-
դում ենք. «Какъ предохранять себя
отъ холеры». Цѣна 5 коп. Москва,
1885 г. Այս գրքի լի հայերէն թարգ-
մանութիւնը հրատարակված է հետե-
ւեւ վերնագրով. № 9. «Ժողովրդա-
կան գրադարան». Ինչպէս պահպան-
վել խօսելով, Թարգմանութիւնն ու-
սերէնից. գինն է 5 կոպ. հրատարա-
կութիւն Բաղրատ Միրիմանեանի:

Հասարակ, համայն, գիտութիւնից դուրս ժողո-
ւրդը, համարեա ընտրեան ամեն մի երեւոյթ
միացնում է և կապում այլ և այլ անապաշտու-
թիւնների հետ: Նրա բարեկեցութիւնը աւելի
կախված է կլիմայական, հիւանդաբանական և այլ
երեւոյթներից և դարմանումն չէ, որ ազէտ ժողո-
ւրդը աւելի է հետաքրքրւում այդպիսի երեւոյթ-
ներով և չը կարողանաւ ճշիւ բացատրել ամեն
մի երեւոյթի պատճառները, ընկնում է բազմա-
տեսակ անապաշտութեան և այլ անտեղի գուշա-
կութիւնների մէջ: Երբեք, կարմուկը, քութէնը
և այլ իր հիւանդանոցն ունեն, որոնք պահում,
պահպանում են ամբողջ հիւանդութեան ժամանակ
վարակած անձին և կարող են իրանց բար-
կութեան վրէժը հանել խղճուկ հիւանդից: Երբ-
եք առողջացած հիւանդի միջոցներով և կեղտո-
տութիւններով լի շորերը այլիկ կարելի չէ,
ասում է ազէտ ամբողջ, որովհետեւ հիւանդը
կը բարկանայ: Կարմուկով, քութէնով վարակված
հիւանդների ընկալաւորները բարբոսի մոտ
պէտք է պահել, եթէ ոչ հրէշտակը բարկութիւ-

Չը մտնանք և այն հանդամները, որ այդ
մօտ հարկւր տարեկան դպրոցների մեծ մասը
գոյութիւն ունեն մեծ քաղաքներում, հետեւաբար
դպրոցների շատ չնչին մասն է գալիս գիւղական
ազգաբնակչութեան վրա, այնպէս որ գիւղական
ազգաբնակչութիւնը ներկայումս կատարելապէս
զրկված է իր որոշոց տարեկան ուսում մատա-
կարելու միջոցներից:

Ներկայումս, ինչպէս յայտնի է, հայոց ծխա-
կան դպրոցների հիմնարկութիւնը և զեկաւարու-
թիւնը ամբողջապէս արված է էջմիածնի հոգևոր
կենտրոնական իշխանութեան ձեռքը, և այդ կենտ-
րոնական իշխանութիւնն է, որ թիւը է տալիս
հիմնելու այս և այն տեղում դպրոցներ. նա է,
որ հսկում է դպրոցների գրամական և ուսումնա-
կան կողմի վրա. մի խօսքով նրա, այդ հոգևոր
իշխանութեան ձեռքում է դաժնում հայոց ծխա-
կան դպրոցների ամբողջ կազմակերպութիւնը և
զեկը:

Այլքի առջև ունենալով հոգևոր իշխանութեան
այդ լայն իրաւունքները, աչքի առջև ունենալով
և այն հանգամանքը, որ հոգևոր իշխանութեան
այդ իրաւունքներից շատագուց ժողովուրդը չէ
կարող և իրաւունք չունի ինքն իր կամքով դպ-
րոցներ հիմնելու, վարժապետներ վարձելու և
դպրոց կառավարելու, բնականաբար նոր դպրոց-
ներ հիմնելու նախաձեռնութիւնը պէտք է
հուրս դադար հոգևոր իշխանութիւնից, որի
պարտքն է, նոյն իսկ իրան տուած իրաւունքների
ստեղծելով, հսկել թէ որտեղ չը կան դպրոցներ,
և ապա աշխատել դպրոցաց աւելի տեղերում
բանալ նոր ուսումնարաններ:

Ներկայ դպրոցական տարրակից նորից հա-
տառվել են ինքնակազմ տեսուհիների պաշտօններ
և այժմ ինքնակազմ տեսուհի պաշտօնը սկսել են վա-

նից կը փնտսէ հիւանդին. կարմուկով, ծաղկով
քութէնով հիւանդին չը պէտք է բժշկել, եթէ ոչ
հրէշտակը որ առաջ կը տանէ հիւանդին, բազ-
մեցնելով իր պապերի գիրկը: Ահա այսպիսի
փնտսակար անապաշտութիւններով է շրջա-
փակված ազէտ հասարակութիւնը, որ իր
ամեն մի քայլը ամեն մի դէպքում յարմարե-
նում է իր հանդուրժեցնել, իր սովորութիւններին,
արհամարհելով գիտութեան ներկայացուցիչների
ցուցմունքները:

Հասարակութիւնը փրկել այդպիսի չարիքնե-
րից կարող է միայն գիտութիւնը: Գիտութեան
ճշմարտութիւնները կարող են միայն բարձրացնել
ժողովրդեան հայեցակէտը, նրանք կարող են
միայն դարձնել ժողովրդեան ինքնաճանաչու-
թիւնը, նրանք կարող են միայն բարձրել հասա-
րակական և ընտանեկան կեանքը, պարզել և
բացատրել ժողովրդեան մէջ մարմն ու արիւն
դարձած կոպիտ նախապաշարմունքները և ժողո-
ւրդեան ինքնաճանաչութեանը կանոնաւոր ըն-
թացք տալ:

Գիտութեան ճշմարտութիւնները ժողովրդացնե-
լու միջոցներից առաւելագոյնը կ'են դաժնի
խօսքն է: Վաճառները, ուսուցիչները և ընդ-
հանրապէս ժողովրդի հետ սերտ յարաբերու-
թիւն ունեցող անձինք պէտք է ուղեցոյց լինեն
գիւղի, քաղաքի, շրջանի ժողովրդին, որը
հետ ապրում են նրանք: Թէ ուսուցիչը և թէ քա-
ջանան նոյն իսկ դպրանոցում պէտք է ծանօթա-
նան այն բոլոր առարկաների հետ, որոնք լայնաց-
նում են մարդու աշխարհայեցողութիւնը և
պէտք է ժողովրդացնեն մի և նոյն իրանց ապագայ
գործունէութեանը: Առողջապահութիւնը, իրեն
գիտութիւնների մի ճիւղը, իր անսահման ազդեցու-
թեանը աւելի է բարձրացնում ժողովրդեան հաս-
կացողութիւնը ու տեսութիւնը: Ի՞նչ կարող է
աւելի դարձնել ժողովրդեան ինքնաճանաչու-
թիւնը, եթէ ոչ առողջապահական սկզբունքների
ծանօթութիւնը. ընդհանուր կենսական պայման-
ների նշանակութիւնը. օդի և լուսի առողջապա-

րել հոգեւորական անձինք: Սրանից մի քանի տա-
րի առաջ հայոց դպրոցական վարչութեան մէջ
կար թեմական տեսուհի և այն ժամանակվայ
թեմական տեսուհիներ, որոնք առհասարակ աշ-
խարհականներ էին լինում, բաւական գործ էին
կատարում, մի կողմից արապայտելով ժողովրդի
պահանջները և պէտքերը դպրոցական հարցում,
իսկ միւս կողմից աշխատելով իրագործել դպրոց-
ների մէջ այս և այն ուսումնարանական-մանկա-
վարական նոր բեֆորմներ:

Թեմական տեսուհիների գործունէութեան մի
նշանաւոր մասը, ինչպէս այն ժամանակն էր,
այժմ էլ պիտի լինի հետեւեւ. — ուսումնասիրել
և այս և այն տեղի ժողովրդի պահանջները, ի-
մանալ թէ որտեղ չը կան դպրոցներ և տեղեկա-
նալ, թէ որտեղ հարկաւոր է բանալ ուսումնա-
րաններ և ապա ամեն ջանք թափել և զբո-
ղել դպրոցացուի հասարակութիւններին, որ նրանք
միջոց տան և աշխատեն ուսումնարան ունենալ:

Գաղութական այժմեան կազմակերպութիւնը և
կառավարութիւնը այնպիսի ձև են ստացել, որ
ժողովուրդը կենտրոնական հոգևոր վարչութիւնից
է ապաստւում նախաձեռնութիւն, ապա ուրեմն
այդ կենտրոնական վարչութեան գործակալների
թեմական տեսուհիների պարտաւորութիւնն է այ-
ցելել այն խաւար անկիւնները, այն հարկաւոր
գիւղերը, որոնք դուրս են ուսումնարաններից, և
ամեն ջանք թափել, որ այդպիսի տեղերում
հիմնվեն դպրոցներ:

Եւ հէնց այդ կէտի վրա պիտի լինի դարձած
ամեն մի բարեխիղճ թեմական տեսուհի աշխու-
թիւնը, քանի որ դպրութիւնն ունեցող փոքրթիւ-
ղիցները վրա հսկել ինքն իրան ինքնաճանաչ
բարդ և անապաշտ ժամանակ լայն պարսպունք
չէ:

հական ազդեցութիւնը. դեռնի, կլիմայի նշանա-
կութիւնը. առողջապահական սկզբունքներին հա-
մաժառ շինված ընկալաւորների, գիւղերի, քա-
ղաքների առաւելութիւնը. ջրանցքին և կանաչի-
ղացիային վերաբերեալ հարցերի պարզաբանու-
թիւնը. հաղուստի նպատակաշարմար ընտրու-
թիւնը. կանոնաւոր անուղի նշանակութիւնը և
նրա յարաբերութիւնը կազմուածքի կենսական
գործունէութեան հետ. այլ և այլ հասակների
կենսական պայմանները, երկխոսութիւնը, մանկա-
կան հասակը, ուսումնարանական շրջանը, այլ և
այլ տեսակ աշխատանքների առողջապահական
պայմանները: Հիւանդութիւններին վերաբերեալ
ընդհանուր տեսութիւնը, հիւանդութեան պատ-
ճառները, հիւանդութեան առաջն առնելու հա-
մար առողջապահական միջոցները, վարակիչ
հիւանդութիւնների էությունը, նրանց ծագման և
տարածման եղանակները, նրանց առաջն առնե-
լու առողջապահական միջոցները, ծաղկահատու-
թիւնը և նրա գործադրութիւնը, զեղեխիցիկայի
սկզբունքները և նրա դիտարկեալ կատարելը և
այլն և այլն... և հաւ այս ամենը իրանց անսահ-
ման նշանակութեամբ ազդում են մեր կազմուած-
քի կենսական գործունէութեան վրա:

Այս բոլորի հետ ժողովրդական գործիչը հիմնա-
ւոր կերպով կանխօրէն պէտք է ծանօթանայ, որ
իր ապագայ գործունէութեանը կենտրոն լածքով
ժողովրդացնել գիտութեան ճշմարտութիւնները
Առողջապահական դէպքերով պատրաստ ժողով-
րդական գործիչը կարող է միայն ընդդիմանալ այն
աֆերիստների վնասակար գործունէութեանը,
որոնք հէթիմներ, զօխտուհիների տիրութիւններով
բաց համարձակ տգէտ և դիւրահաւատ ամբոյնի զըր-
պանը աւաղակաբար դատարկում են, թունաւորե-
լով անբաղձ հիւանդներին այլ և այլ սաստիկ
ներգործութիւն ունեցող դեղերով: Ժողովրդի
հետ սերտ յարաբերութիւն ունեցող քաջանանները,
ուսուցիչները, ուղեցոյց են լինելու դիւրահաւատ
անապաշտութեան հետեւեւներին նմանակող հա-
տարակութեանը, աղատելով նրան արեւնաբո-
ւում:

Երբ այդ նպատակը կը դրվի, և երբ հայոց
դպրոցական վարչութեան ներկայացուցիչները կը
սկսեն եռանդով դիմել այդ նպատակին, — այն
ժամանակ, անկասկած, մեր երկրի հարկաւոր
գիւղերը և խաւար մնացած անկիւնները կուեն-
նան իրանց տարեկան դպրոցները, և մենք ա-
ղատված կը լինենք այն յուսահատեցնող փա-
տից, թէ մի միլիոն ժողովուրդը հարկւր դպրոց
միայն ունի:

Խ. Մ.

ԳՐՈՇՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Թիֆլիսի Մուշաթիկ կոչված այգիում, որ ա-
մենք տեսած կը լինեն այն փառաւոր շինու-
թիւնները, որոնք դեռ չեն աւարտված և շարու-
նակվում են կառուցանելի, մի քանի տարուց ի
վեր գոյութիւն ունի, այսպէս կոչվող օրինակելի
շէրաժառանգ: Եւ կառուցված ու կառուցան-
վող փառաւոր շինութիւններն էլ հէնց այդ օրի-
նակելի շէրաժառանգ համար են: Գործի գլխին
կանգնած անձինք համոզված են, որ թէ չերամա-
տենք, թէ սերմ հանելու բաժնի, և թէ վերջա-
պէս օրինակելի չերամապահական մուղէյը, որ
պիտի կառուի, մեծ նպատու ցոյց պէտք է տան
ամբողջ կովկասի չերամապահական գործին:

Թողնելով որ ինքը ապագան պարզի այն
հարցը, թէ որքան գործնական օգուտներ կարող
է տալ մի չերամատուն, որը հիմնված է Թիֆլի-
սում, այնինքն ոչ-չերամապահական մի կենտրո-
նում, մենք միայն մատնանի կաննք մի
միջոցի վրա, որ կարող է եթէ ոչ շատ մեծ,
բայց և այնպէս մի օգուտ տալ մեր գաւառներ
չերամապահական:

Ամառվայ ամիսներին գաւառներից Թիֆլիս են

հիւանդներից և աֆերիստ խաբեբաներից: Ամեն
մի տեղի ունեցող խաբեբայական դէպքում, առող-
ջաբան քաջանան, ուսուցիչը պարզում է, բացատ-
րում է ամբոյնի դիտութեան տեսակէտը և
եթէ այդպիսով նրանք վերջ չը տան հասարակու-
թեան մէջ սաստիկ տարածված խաբեբաների
գործունէութեանը, դոնէ մասամբ կը նուազեցնեն
նրանց յանդիմութեան տխուր հետեւները. ոչ
մի օրէնք, ոչ մի ստիպողական միջոց խաբեբա-
ների վերջ տալ չեն կարող: Պէտք է աշխատել
առողջապահական սկզբունքները նոյն իսկ ժողո-
ւրդեան մէջ տարածել, իսկ առողջապահական
սկզբունքներ տարածողները պէտք է լինեն ժողո-
ւրդի հետ մօտ յարաբերութիւն ունեցող անձինք
— քաջանանները, ուսուցիչները, որոնք այդ նպա-
տակի համար դարանոցներում կանխօրէն պէտք է
պատրաստված լինեն ժողովրդեան մէջ գիտակցա-
բար գործելու:

Գիտութիւնը ժողովրդացնելու երկրորդ միջոցը
ժողովրդական գրքոյններն են. որքան էլ որ դի-
ւրիս և աւելի նպատակաւոր լինի և գիտութեան
ճշմարտութիւնները կենտրոն լեզուով ժողովրդա-
ցնելը նոյն իսկ անպատրաստ ամբոյնի մէջ, այն-
քան ևս դժուար է մինչև անգամ բարեխիղճօրէն
կազմած հանրամատչելի գրքոյններով պարզել, ի-
րաքանչիւր ընթերցողին հասկանալի անել և տա-
րածել ամբոյնի մէջ գիտութեան այս կամ այն երե-
ւոյթը: Առողջապահական հետ ծանօթ ամեն
մի քաջանայ, ուսուցիչ կենտրոն լեզուով կարող
է անգրագէտ գիւղացիներին անգամ երկար պար-
զաբանութեամբ հասկանալի դիտութեան այս կամ
այն բացատրութիւնը, բայց հանրամատչելի զըր-
քոյնները, որքան էլ որ նրանք պարզ ու հասա-
րակ լեզուով գրած լինեն, այնու ամենայնիւ չա-
տերիս անմատչելի կը լինեն: Ընթերցողը հանրա-
մատչելի գրքոյնների մէջ հանդիպելով մի որ և է
անհասկանալի պարբերութեան, մի որ և է ան-
հասկանալի տերմին, թողնում է այդպիսի գըր-
քոյնների ընթերցանութիւնը: Ահա անհասկալի է,

զարիս զանազան վարժապետներ և առհասարակ անյալիս անձինք, որոնք տարվա մեծ մասը անց են կացնում դաւանութեամբ, ժողովրդի մէջ: Եթէ ուսուցիչները իրանք ընդհանուր գործնական տեղեկութիւններ ունենան չըրաւարտութեան, սերմ հանելու, չըրաւարտութեան և այլ մի քանի գործի հետ կապ ունեցող բաների վրա, անկապա՞ծ դաւանութեան վերադառնալով, կարող էին իրանց խորհուրդներով օգուտ ցոյց տալ ժողովրդին:

Թիֆլիսի չըրաւարտներ կարող է այդ տեղեկութիւնները հաղորդել ցանկացողներին: Մեզ տեղեկացնում են, որ եթէ ցանկացողները թիֆլիսի խոյն իսկ տանին հասնի, այդ չըրաւարտներ մասնաւոր չըրաւարտները պատրաստ են դաւանութիւններ կարդալու և գործնական տեղեկութիւններ հաղորդելու ցանկացողներին, նոյն իսկ օրինակելի չըրաւարտներ չիտովեան մէջ: Ուրեմն մնում է, որ ցանկացողները, դաւանելից եկածները հաւաքվին, յայտնեն որ իրանք գործով հեռացրել են, նշանակին այն ժամերը, երբ կուրող են գնալ և դադարել չըրաւարտական գործով և այդ արդէն բաւական է, որ չըրաւարտներ մէջ եղողները յայտնեն առանձին հաղորդել այն բոլոր գործնական գիտելիքները, որոնք հարկաւոր են: Մենք կարծում ենք, որ տալիս դասախօսութեան մէջ շատ բան կարելի է հաղորդել, և չըրաւարտներ ղեկավարները այնքան բարեխիղճ, գործին նուիրված և օրինաւոր կը լինեն, որ չեն դաժնայ ամեն կերպ նպաստելու, որ դաւանելից եկածները, ցանկացողները իրանց հետ մի քանի տեղեկութիւններ տանեն և ժողովրդին հաղորդեն:

Դրանով թէ մեր դաւանական երկատարները մի գէշը կունենան ժողովրդին օգնելու, և թէ ինքը Թիֆլիսի մեծամասն օրինակելի չըրաւարտներ մի շօտախելի գործ կատարած կը լինի:

ՆԱՄՍԱ ԿԱՐԱՐՈՒՄՈՒՄ

Օգոստոսի 1-ին

Վաղարշապատի փողոցներէջ անցնողը կը պատահէ կիտած կռիւի աղբի (բաժանի կամ աթաբեկ) ղեղերը, սարաւանդի ցեխի, որոնց մօտից անցնողը հարկաւորված պէտք է քիթը բռնի և մի քանի րոպէ չունչը պահելով անցնի, որպէս զի աղատվի այդ գարշահոտութիւնից: Մի քանի փողոցներ թէ՛ ցեղից աղատ են, բայց նրանք էլ մի ուրիշ յատկութիւն ունեն, այն է ծածկված են թանձր

փոշիով: Բաղարի մէջանը լի է սեխի և ձմերուկի հոտած կեանքերով, միւս կողմից հասարակական հոտած է, որի հոտից մարդ ուղիւմ է մի քանի վերստ հեռու փախչել. մի ուրիշ տեղ ընկած են սատկած չնր, կատուներ և ուրիշ կենդանիներ...

Տեղումս տարածված են փորացաւ (լուծ) և զիֆտերիա (բզացաւ) հիւանդութիւնները, որոնց զոհ են գնում մէկ տարեկանից մինչև հինգ տարեկան երեխաները և որ չէ անցնում, որ այդ ցաւերից՝ մէկից մինչև երկու երեխայ չը մնան: Այժմ լուծով ընկած է անկողնում մի կին, որը գտնվում է երկուշի մէջ. հրաւիրում ենք մեր դատաւական բժշկին, բժիշկը տեսնելով հիւանդին՝ դատաւական բժշկին հարկաւոր չէ՝ դեղ տալ, որովհետեւ երեխան կը վաճառ, այլ շորով կապեցէք փորը՝ և լուծն ու արիւնը կը կարվի, այդ հօ մեր պատաւներն էլ գիտեն:

Վաղարշապատում ունենք երկու բժիշկի, բայց ցատով պիտի յայտնեն, որ այդ երկու բժիշկից և ոչ մէկը մեր սեփական բժիշկը չէ: Մենք դաւանական բժիշկ է, որը ամեն օր չըլում է զիւղերը և չաբաթվայ մէջ հաղիւ երկու օր այտուղ է լինում: Սրա բացակայութեամբ ժամանակ ժողովուրդը դիմում է մեր բժիշկին, որը ձեռնարանի և վանդի բժիշկն է. սա էլ հասարակ դասակարգին պատասխանում է՝ «դուք բժիշկ ունեք, նրան դիմեցէք»: Այնքալ որը զիֆտերիայի վարակված միւսու մի տանն և ուր տարեկան աղայ, որի մահը մեծ ցաւ պատճառեց համարեա ամբողջ Վաղարշապատին:

Պէտք է նմանապէս ուշ դարձնել տեղիս դեղատան վրա, որը կառուարվում է մէկ անվործ երկտարարի ձեռքով. դեղերը ծախում է շատ թանկ գնով: Գեղատան ներկայացնողը մնում է լի-դեղատան և հարցնում է՝ ուր է դեղատանը, ծառան պատասխանում է թէ տանը չէ, ուստեցէք դու կանչես:

Ինքուրում ենք, ում որ հարկն է, թող ուշ դարձնեն այդ բոլորը վրա, խնդրում ենք նաև Վաղարշապատի յարգող հասարակութեանը, որ ինչպէս ընկերացողն էլ կը վկայի ինձ հետ, հարկաւոր է մեզ մի հիւստ և գործունայ բժիշկ ունենալ, մասնաւոր այժմ, երբ դանադան ցաւերը հետզհետէ տարածվում են մեզանում:

Երկուս վիճարանութիւններից և ժողովներից յետոյ մօտ օրերս վերջապէս հաղիւ հաղ կարողացանք ընտրել երկուս դպրոցների համար հոգաբարձուներ: Ընտրվեցան Ս. Մուշեղեանց և Յ. Կար-

գիտնական ամապրերից, շաբաթաթերթերից՝ ընթացիկ դիտական մասուլից, և աշխատասիրողների արժանաւորութիւնը հնչեց նրանում: Ե, որ հարցին վերաբերեալ տեղեկութիւնները համաձայն լինեն գիտութեան վերջին տեսակէտին և և կարգաւորած, ժողովրդացրած լինեն հանրամատչելի լեզուով և հասկանալի գոնէ մեծամասնութեանը: Գիտութեան վերաբերեալ երեւթութիւնները, փաստերը հասկանալի անել ամեն մի կարողացողի համար ոչ թէ դժուար է, այլ անկարելի է անգամ. օրինակ, վերջինք խօսեալ հիւանդութեան վերաբերեալ ժողովրդական ընթերցանութեան համար գրված ամենակարեւոր տեղեկութիւնները, որքան էլ որ ուշի ուշով ընտրված լինեն ամենակարեւոր տեղեկութիւնները, որքան էլ որ պարզ դասաւորված և բացատրված լինեն գիտական փաստերը, այնու ամենայնու ամեն մի շատ թէ քիչ կարող է իմացող գիտացող համար դժուարեամբ կարող են լինել և անմատչելի:

Գիտական տեսակէտից կարեւոր ժողովրդական ընթերցանութեան համար գրեցինք իրանց գրելու առհասարակ, որից դուրս ոչ մի աշխատասիրող կարող չէ դուրս գալ և գրել այնպիսի ձևով, որ բոլոր ընթերցողներին էլ հասկանալի լինի իր աշխատասիրութիւնը. առողջապահական կամ բժշկական հարցեր ժողովրդացնող աշխատասիրողին մնում է այդպիսի ընթերցողներին համար թողնել գիտական փաստերի հասարակութիւնը և ուղղակի անցնել լոկ բժշկական և առողջապահական խորհուրդներին, որոնք պիտի գործ դրին այս կամ այն համաձայնակ և այլ հիւանդութեան ապակուր ժամանակ, կամ նոյն իսկ հիւանդութեան միջոցին: Այդպիսի լոկ խորհուրդներ խօսեալ հիւանդութիւնից պաշտպանութեան համար, կամ խօսեալ հիւանդութեան պաշտպանութեան համար, պաշտօնապէս ապկում և ցրվում են ժողովրդի մէջ տանական հաղորդելու, բայց այդպիսի հրահանգները չունեն մի նշանակութիւն, ինչ որ կարող են ունենալ ժողովրդական ընթերցանութեան համար գիտական տեսա-

կականց. այժմ հարցը նրանումն է, թէ արդեօք այս նոր հոգաբարձուները կը ստանան իրանց այդ նոր և ծանր պաշտօնը, թէ ոչ:

Ն. Տ. Վ.

ՆԱՄՍԱ ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑ

Օգոստոսի 1-ին

Նոր-Բայաթեում ձովեղէն ապրանք ծախողների առևտուրը շատ թույլ կերպով է առաջ գնում, իսկ մանրավաճառներին՝ բոլորովին ընկած է: Այժմ կարելի է ասել, որ առևտուր շատ-քիչ լինում է զինհետևում և մրցավաճառանոցներում միայն: Այդ երևում է նրանից, որ օրական բարդ մաթիւ կոնսերի և էշերի (կոնսերով բերում են քրքր-գերը, իսկ էշերով՝ տեղացիները) բեռներով սեխ, ձմերուկ և շատ ուրիշ տեսակ մրգեր թափվում են տեղիս փողովի հրապարակը: Իսկ ողբից լը-միշները վաճառող զինհետևերի մասին խօսելն անհամար անկողի է. այդ Նոր-Բայաթեում դաւանական մի քաղաք լինելով՝ ունի միմիայն 20 հատ մասնագիտացող խանութներ, իսկ զինհետևեր՝ տասը: մինչդեռ չըլակայ մի քանի զիւղերում նոյնպէս կան զինհետևեր, իսկ ձովեղէն ապրանքների խանութներ՝ բոլորովին ոչ:

Այստեղ արագի ծախսը, մասնաւոր կերպի և տուն օրերին, չափազանց շատ է լինում և դրա հետևանքն այն է լինում, որ կերակրի օրերը մարդիկ չափից թուլեալ արագ խմելով՝ և իրանց հակառակորդների հետ ունեցած ոխը մտաբերելով՝ սկսում են միմիայն օձիքից բռնել և կռիւներ սարքել: Պէտք է ասած, որ մեզանում հասարակական միջնորդ պարզվում և վերջանում են կռիւներով: Այդ դէպքում, որոնց «քեռմակը» (կուռում օշնող) շատ է յողթանակը նրանց կողմն է լինում. բայց պարզ բան է, որ այդպիսի հանդամանքներում աղքատը միշտ ստրուկ և ճորտ է դարձած հարստին, իսկ վերջինս՝ նրա խելոցը:

Չը նայած, որ Երևանը մի աննշան հեռավորութեան վրա է գտնվում այստեղից, այնու ամենայնիւ տեղիս հրապարակում ձմերուկը, սեխը և այլ մանր մրգեղենները ծախվում են շատ թանկ գներով: Օրինակ, Երևանում 100 հատը 2 րուբլի արժեցող սեխը այստեղ 8—10 կոպէկով է ծախվում հարաւ. իսկ լիտրը (2 ֆունտ) 8—10 կոպէկով առնված ինձնորը այստեղ արժէ 21/2 և 3 կոպէկ ֆունտը:

Վաճառվող մրգերը կամ սեխը վատ տեսակներից են, որոնք անշուշտ կարող են հիւանդու-

կելից գրված մի և նոյն հարցին վերաբերեալ գրեցինք:

Ուրեմն ժողովրդական ընթերցանութեան համար բժշկականութեան և առողջապահութեան հարցին վերաբերեալ հանրամատչելի գրեցինք կարեւորներից մեզ պէտք է պահանջներ նաև առաջ, որ դիտական փաստերը գիտութեան վերջին տեսակէտին համար ոչ թէ դժուար է, այլ անկարելի է անգամ. օրինակ, վերջինք խօսեալ հիւանդութեան վերաբերեալ ժողովրդական ընթերցանութեան համար գրված ամենակարեւոր տեղեկութիւնները, որքան էլ որ ուշի ուշով ընտրված լինեն ամենակարեւոր տեղեկութիւնները, որքան էլ որ պարզ դասաւորված և բացատրված լինեն գիտական փաստերը, այնու ամենայնու ամեն մի շատ թէ քիչ կարող է իմացող գիտացող համար դժուարեամբ կարող են լինել և անմատչելի:

Այժմ դառնաւ պ. Բ. Միլիանսեանի հրատարակած և ու. Ն. Ի. Բոգոսլովսկու աշխատասիրած գրեցինք և տեսնենք, թէ որքան է համապատասխանում նա վերոյիշեալ պահանջներին:

Մենք չենք կարողանում մեզ պարզել, թէ ինչպիսի պատճառներից գրված պ. Բ. Միլիանսեան թարգմանութեամբ հրատարակել է սրանից հինգ տարի առաջ ռուսերէն լեզուով ապագրված, իբր ժողովրդական ընթերցանութեան համար պ. Ն. Ի. Բոգոսլովսկու աշխատասիրութիւնը: Կամեցել է արդեօք պ. Բ. Միլիանսեան նախապատրաստել մեր հասարակութիւնը վտանգ ապահով թշնամու դէմ նախազգուշութիւններ գործ դնելու համար, իսկ հիւանդութեան ժամանակ ամենայն կերպ օգնել հիւանդին և պահպանել վարակութիւնը, և կամ կամեցել է իր «ժողովրդական գրադարանի» ինքնորոշ հրատարակութեան համար ընտրել մի այնպիսի հարց, որ այժմ աւելի է զբաղեցնում հասարակութիւնը, ապա ուրեմն և մի այդպիսի գրեցինք հրատարակութիւնը աւելի ևս տարածվելու աւելի պիտի ժողովրդական «ժողովրդական գրադարանի» ֆիրման պ. Բոգոսլովսկու Միլիանսեանի անունով: Մենք կարծում ենք այս վերջինն է

թիւն առաջ բերել. և եթէ նկատողութիւն էք նախապէս անդադրեալ մրգերի վաճառարութեան մասին, պատասխանում են՝ ճ ո Վ Ե ր Կ Ի ր Ե, Ի ն չ վ ն ա ս ո լ ն Ի:

Գ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ցանկացողները օգոստոս ամիսից, այսինքն 5 ամսով «Մշակին» գրվելու, պէտք է վճարեն 5 րուբլի:

«Тифл. Листок» րադիքը հաղորդում է, որ այս օրերս Մաշադի-Գուլի-Ալի-օղլի անունով մի ժօլա խնդրել է տուել հայ-ուսաւորչական կօնսիստօրիան, որի մէջ ցանկութիւն է յայտնում ընդունել հայ-ուսաւորչական կրօնը: Մաշադի-Գուլի ի ծնէ հայ է, և մանկութեան հասակում ընդունել է մասնաւորապէս լինում. նա շատ լաւ հայերէն է խօսում: Կօնսիստօրիան այդ առիթով ղեմեց Վ. Կաթողիկոսին: Նորին Վեհափառութեան կարգադրութեամբ ժօլա Մաշադի-Գուլի Սեանի վանքն է ուղարկված, որ նա քրիստոնեայ կը մկրտվի:

Կարսի շրջանի կուրտաբախ և տնտեսական դրութեան մասին շատ անմիտեղ տեղեկութիւններ է հաղորդում պաշտօնական «Карс» րադիքը: Լոպարի խօսքերից երևում է, որ Կարսի շրջանը կայսրութեան հետ միացնելու ժամանակից, երկարագործութեան և անաւարտագործութեան, որոնք մեծ դեր էին խաղում տեղական ժողովրդական անտեսութեան մէջ, շատ ընկել են: Դրա վրա, գլխաւորապէս, աղղեց ընդէլ աղղաւանութեան Թուրքիա դադիցները, իսկ նորաբնակները չը կարողացան վերականգնել երկրի արդիւնաբերութիւնը, որովհետեւ մեծ մասամբ չը գիտեն տեղական պայմաններին յարմարվել և ոչ էլ արդէս հարստի ու աջողակ են մշակում հողը: Դատելու համար թէ ինչպիսի դարմանալի փոփոխութիւն է կատարվել այդ կողմից Կարսի շրջանում, պէտք է, օրինակ, ուշադրութիւն դարձնել հետեւեալ հանգամանքներ վրա. Փղըր-Սուխայի շատ մարտի հաշակ ունենալով, Կարսի սանջակը այնպէս առատ հաց էր տալիս, որ մեր կապալաւորները, որոնք պաշար էին պատրաստում ցորեն մատակարարող շտեմարանների համար, գնում էին ցորենի պուրը 10—20 կոպէկով և մինչև

եղել պատճառը, այդպիսի ոչ թէ անօգուտ, այլ մինչև անգամ վնասակար գրեցիլի հրատարակութեանը: Դիմել է արդեօք պ. Միլիանսեան, զորքիլի ընտրողութեան համար տեղեկակ մասնագետ անձանց, քանի որ, ինչպէս միջ բոլորից յայտնի է, ինքն անկարող էր այդ անել: Ոչ մի բարեխիղճ մասնագետ չէր համարձակվի առաջարկելու այդպիսի դատարկ, դիտութեան ճշմարտութիւնները խառնաշփոթ արած մի գրեցիլի Նոյն իսկ ռուսաց ժողովրդական գրեցիլի «Что читать народу» Т. II» այդ գրեցիլի մասին նպատաւոր չէ խօսում, դանելով անյարմար ժողովրդական ընթերցանութեան համար: Մնում է մեզ ընդունել որ գրեցիլի աշխատասիրողը՝ Н. И. Богословский աղղաւանը, Բոգոսլով Միլիանսեան, խառնելով Սուխայի համապարանի պրօֆէսոր В. С. Богословский աղղաւան հետ, խաբվել է և թարգմանութեամբ հրատարակել այդ գրեցիլը հայ ընթերցողներին՝ համար. Н. И. Богословский, բժիշկ չէ, այլ ինչպէս երևում է, Սուխայի և Պետերբուրգի հրատարակիչների անկող աշխատասիրողներից մինն է, որոնք պատրաստ են և մասնագիտական հարցեր ժողովրդացնելու, ընտրելով իրանց համար ուղեցոյց այլ և այլ ձեռնարկներ և հարցին վերաբերեալ այլ գրութիւններ: Այդպիսի աշխատասիրողներով լի է Սուխայի և Պետերբուրգի գրականական շուկան. նրանք հարցին տեղեկալ չը լինելով, առանց ընտրողութեան այլ և այլ աղղիւններից օգուտ քաղելով մի քանի օրվայ մէջ կարկատում են իբր ժողովրդական ընթերցանութեան համար մի գրեցիլ, մի հարցաւորի վերնագրով, միմիայն ընթերցող հասարակութեան գրաւոր դատարկելու համար: Բոգոսլով Միլիանսեանի գրականական շուկան և ինչպէս չի բերել ոչ մի հրատարակողին:

(Կը չարունակվի)

